Ընդունելության պայմանները

Ասպիրանտուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից անհարգելի պատճառով ազատված անձինք կրկին պետ. պատվերով ասպիրանտուրա ընդունվել չեն կարող:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը պետք է հասցեագրել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

երկու օրինակից.

1. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների և դրանց հավելվածների պատճենները (Եթե դրանք դեռևս ստացված չեն, ապա համապատասխան ակադեմիական տեղեկանք բուհից), օտարերկրա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության **համարժեքության** մասին
2. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
3. Ինքնակենսագրություն
4. Երեք լուսանկար (3×4 չափսի), որից երկուսը *փակցված* անձնական թերթիկներին,
5. **Օտար լեզու** ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ)
6. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում (մեկ օրինակ)
7. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում)
8. Անձնագրի և զինվորական գրքույկի պատճենները

7. Երկու թղթապանակ (կապվող):

Անձնագրի, զինվորական գրքույկի, դիպլոմների բնօրինակները ներկայացնել անձամբ:

Ասպիրանտուրա ընդունվողը հանձնում է քննություն մասնա–գիտությունից, որի հանձնելու կարգի և ծրագրի մասին անհրաժեշտ է տեղեկանալ ՀՀ ԳԱԱ այն գիտական կազմակերպությունում, որի գծով տրված է հայտարարություն կամ պաշտոնական կայքէջից:

Մասնագիտական առարկայի քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Քննության վերահանձնում չի թույլատրվում:

Մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ կազմակերպության ընդունելության քննության ընթացքում:

Դիմորդը քննությանը ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

«Օտար լեզու» առարկայի սահմանված անցումային շեմերն են.

*Անգլերեն լեզու՝«*TOEFL»(iBT) – 46 միավոր և «IELTS» 5.5 միավոր:
Ֆրանսերեն լեզու՝«TCF» - 200 միավոր:
Գերմաներեն լեզու՝ «on DaF» - 60 միավոր:

Մրցույթի անցկացում

Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում՝

ա/ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ընդհանուր միջին գնահատականը,

բ/ բաիկալավրի և մագիստրոսի դիպլոմի ընդհանուր միջին գնահատականի գումարը,

գ/ հրատարակված գիտական աշխատանքների քանակը

դ/ միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները, կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային
կենտրոնի
տնօրեն Ա. Սարգսյանին
_____ -ից

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ թույլ տալ մասնակցելու (առկա,հեռակա,վճարովի) ասպի-
նշել ընտրած ուսուցման ձևը

ռանտուրայի ընդունելության քննությանը ----------
---------- մասնագիտության
գծով:

_____
ստորագրություն

Ամսաթիվ ամիս, տարի